ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Նվիրվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին

№ 16

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

Посвящается 50-летию основания факультета востоковедения ЕГУ

№ 16

Ереван
Издательство ЕГУ
2019

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES

Dedicated to the 50th anniversary of the foundation of the faculty of Oriental Studies of YSU

№ 16

YEREVAN
YSU PRESS
2019

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Դավիթ Հովհաննիսյան
8-9-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԴԱՊՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ 9-22

Վահե Հակոբյան
ԻՍԹԻՀՍԱՆԸ ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ՄԱԶՀԱԲՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ 23-34

Ռուբեն Միրաքյան,Հարություն Մաթևոսյան
ՈՒՍԱՄԱ ԲԵՆ ԼԱԴԵՆԻ ԿՈՂՄԻՑ ՋԻՀԱԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ ԸՆԴԴԵՄ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԻ 35-47

Անդրանիկ Հարությունյան
«ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՇՈՒՐՋ 48-60

Թյուրքագիտություն

Ավետիք Հարությունյան
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 61-75

Հայկ Դարբինյան
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 76-87

Մարիամ Մելքոնյան
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԴԻՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՆԵՋԱԹԻ ԵՎ ՄԻՀՐԻ ՀԱԹՈՒՆ 88-96

Արթուր Միրզոյան
ՀԱՅ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 97-108

Տաթևիկ Սարգսյան
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (SOCAR) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 109-119

Սամվել Ռամազյան
«ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 120-152

Իրանագիտություն

Արտյոմ Տոնոյան
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ (ԹԱԹԵՐԵՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ. 153-160

Լիանա Պետրոսյան
ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ ՄԱՀՄՈՒԴ ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2009 ԹԹ.) 161-171

Շուշաննա Գալստյան
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱ-ԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՓՈՐՁԸ ԲԱՀՐԵՅՆ 172-180

Աննա Գևորգյան
«ՄԱՐՋԱՅԵ ԹԱՂԼԻԴԻ» ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ՇԻԱՅԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ 181-191

Հասմիկ Բիանջյան
ԽԱՂԱՆԻԻ ՊՈԵՏԻԿԱՅԻ ՇՈՒՐՋ 192-198

Հովհաննես Խորիկյան
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XX ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 199-209

Անի Նահապետյան
ԱՌԱՋԻՆ ԱՔԵՄԵՆՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՄՈԳԵՐԸ 210-223

***

Ամալյա Գրիգորյան
ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՎՈՐԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԻՐԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿ. ԱՌԱՍՊԵ՞Լ, ԹԵ՞ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 224-229

Տիգրան Գրիգորյան
«ՃԱՆԿՈՂ ԱՐԾԻՎԸ» ԵՎ «ԵՐԿՆԱՅԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ 230-247

CONTENT

Arabic Studies

Davit Hovhannisyan
ARAB WORKS OF THE 8-9TH CENTURIES AS A SOURCE FOR THE STUDY OF ADAPTATION PROCESSES 9-22

Vahe Hakobyan
ISTIHSAN IN SUNNI MAZHABS AND ITS ADAPTATION 23-34

Ruben Mirakyan, Harutyun Matevosyan
THE DECLARATION OF JIHAD AGAINST AMERICANS BY OSAMA BIN LADEN 35-47

Andranik Harutyunyan
THE TRANSFORMATION OF THE FOREIGN POLICY OF THE STATE OF QATAR IN THE THREE SEA SYSTEM 48-60

Turkic Studies

Avetik Harutyunyan
THE ROLE OF MILITARY IN FOREIGN POLICY DECISION MAKING IN TURKEY IN 1990's 61-75

Hayk Darbinyan
THE PERCEPTION OF DIPLOMACY BY OTTOMANS AND ITS PRACTICE IN THE CONTEXT OF EXTERNAL WORLD 76-87

Mariam Melkonyan
REFLECTION OF GENDER CONTRADICTIONS IN DIVAN LITERATURE: NEJATI AND MIHRI HATUN 88-96

Arthur Mirzoyan
COMPARATIVE ANALYSIS OF CONTEMPORARY ARMENIAN AND AZERBAIJANI POETRY 97-108

Tatevik Sargsyan
THE ACTIVITIES OF STATE OIL COMPANY OF AZERBAIJAN (SOCAR) IN GEORGIA 109-119

Samvel Ramazyan
THE QUESTIONS OF STUDYING OF THE HISTORISM OF

THE EPIC OF “KOROGLU” AND THE ARMENIAN HISTORIOGRAPHY OF THE XVIII CENTURY 120-152

Iranian Studies

Artyom Tonoyan
ON SOME METHODOLOGICAL FEATURES IN UNIVERSITY TEACHING OF CAUCASIAN PERSIAN (TAT) LANGUAGE 153-160

Liana Petrosyan
THE SOCIO-POLITICAL SITUATION IN IRAN UNDER THE FIRST PRESIDENTAL TERM OF MAHMOUD AHMADINEJAD (2005-2009) 161-171

Shushanna Galstyan
THE EXPERIENCE OF EXPORTING THE IDEOLOGY OF THE IRANIAN ISLAMIC REVOLUTION TO BAHRAIN 172-180

Anna Gevorgyan
THE INSTITUTE OF “MARJAYE TAQLID” AS A CORE FACTOR OF THA SHIA NETWORK 181-191

Hasmik Bianjyan
ABOUT KHAQANI SHIRVANI’S POETRY 192-198

Hovhannes Khorikyan
ON THE LOCATION OF THE XX SATRAPY OF ACHAEMENID PERSIA 199-209

Ani Nahapetyan
THE FIRST ACHAEMENIDS AND MAGIS 210-223

***

Amalya Grigoryan
KING SOLOMON AS A REAL AUTHOR OF THE SONG OF SONGS: MYTH OR TRUTH? 224-229

Tigran Grigoryan
THE SYMBOLS OF "CLAWING EAGLES" AND "HEAVENLY KINGDOMS" IN THE ART OF CHRISTIAN EAST 230-247

Դավիթ Հովհաննիսյան[1]

8-9-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԴԱՊՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Բանալի բառեր՝ *ադապտացիոն գործընթացներ, մուսուլմանական ումմա, խալիֆայություն, գիտելիք, ադաբ*

Քաղաքակրթական համակարգերին մշակույթների ադապտացման գործընթացների ուսումնասիրությունը չափազանց կարևոր և արդիական խնդիր է: Այն որոշ չափով վերլուծվում է 20-րդ դ. կեսերին ամերիկյան գիտնականներ Է. Հոլլի, Հ. Ջայլզի, Ռ. Լյուիսի, Ջ. Թրեյջերի և մի շարք այլ հետազոտողների[2] միջմշակութային հաղորդակցության հիմնահարցերին նվիրված տեսություններում, սակայն պատմության փիլիսոփայության և պատմագրության ոլորտներում այս հարցի հետ առընչվող հիմնական մոտեցումը ձևակերպել է Առնոլդ Թոյնբին (1889-1975)[3]: Նրա առաջարկած «Մարտահրավեր-Պատասխան» պատմական զարգացման օրինաչափության

[1] ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ., էլ փոստ՝ dhovhannisyan@ysu.am

[2] Տես՝ Hall E. T. Beyond Culture / E. T. Hall. Garden City; New York: Anchor Press, 1976. 256 p., Lewis R. D. When Cultures Collide: Managing Successfully Across Cultures / Boston –London, 2006. Tylor E. B. Primitive Culture: Researches into the Development of Mythology, Philosophy, Religion, Art, and Custom / E. B. Tylor. Cambridge, Cambridge university press, 2010.

[3] Մանրամասն տես՝ Toynbee A. G., A Study of History, The Geneses of Civilization. http://nobsword.blogspot.com/1993_10_17_nobsword_archive.html#geneses%20of%20civilizations.

տրամաբանությունը հետևյալ ձևակերպմամբ է ներկայացվում. «Մարտահրավերը դրդում է զարգացման: Մարտահրավերին պատասխան տալով հասարակությունը լուծում է իրեն առաջարկված խնդիրը, ինչի շնորհիվ էլ ինքն իրեն անց է կացնում կառույցի բարդացման տեսակետից ավելի բարձր և ավելի կատարյալ իրավիճակ»[4]:

Եթե այս ձևակերպումները կիրառելի են նախաիսլամական և վաղ իսլամական (մինչև այն որոշիչ պահը՝ 660-ական թթ., երբ նոր ձևավորվող խալիֆայության քաղաքական, հասարակական, մշակութային և տնտեսական կենտրոնը Արաբական թերակղզուց տեղափոխվում է սկզբից Սիրիա, ապա, կես դար հետո՝ Իրաք) արաբական հասարակության համար, քանի որ անապատային և կիսաանապատային պայմաններում գոյության պահպանման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էին նոր գաղափարներ և լրացուցիչ ջանքեր, իրավիճակը կտրուկ փոխվում է նվաճողական արշավանքների արդյունքում նոր և շատ ավելի նպաստավոր պայմաններում հայտնվելուց հետո:

Ա. Թոյնբին որպես մարտահրավեր դիտակում է հիմնականում բնակլիմայական պայմանների ոչ նպաստավոր լինելը[5] և գտնում է, որ «մարտահրավերների բացակայությունը նշանակում է աճի և զարգացման դրդապատճառների բացակայություն: Ավանդական կարծիքը, համաձայն որի բարենպաստ կլիմայական և աշխարհագրական պայմանները անպայմանորեն խթանում են հասարակական զարգացումը, փաստորեն սխալ է: Հակառակը, պատմական օրինակները ցույց են տալիս, որ չափից ավելի

[4] Тойнби А., Постижение истории, М., 2002, с. 126.

[5] Նվաճվածի՝ նվաճողի դեմ պայքարելու կամ նրա հետ համագործակցելու մարտահրավերի պատասխանը Ա. Թոյնբին դիտարկում է զելոտականության և հերովդեսականության իրար հակադիր տարբերակներով: Տե՛ս այս մասին՝ Toynbee A. G, Civilization on Trial, published by Oxford University Press 1948, p.196.

նպաստավոր պայմանները որպես կանոն խրախուսում են վերադարձը դեպի բնություն, որևէ տեսակի աճի դադարեցում»[6]:

Սակայն իսլամի դրոշը բարձացրած արաբական ցեղերի արշավանքների հետևանքով գոյացած խալիֆայության զարգացման և աճի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների պատմական օրինակը հակառակն է վկայում: Բանն այն է, որ այս դեպքում մենք գործ ունենք բոլորովին այլ տիպի մարտահրավերի հետ, որը կարելի է անվանել ադապտացիոն մարտահրավեր: Ակնհայտ է, որ ադապտացվելու և այդ գործընթացի հաջողության դեպքում աճի և զարգացման խնդիրներ պետք է լուծեին ոչ միայն նվաճված երկրների ժողովուրդները և հասարակությունները, այլ նաև իրենք՝ նվաճողները: Երկու կողմերի համար էլ դա բարդագույն խնդիր էր, որի ամբողջական լուծումը ստանալու դեպքում պետք է տեղի ունենար ամբողջական միաձուլում, ինչը, ինչպես հայտնի է, միայն որոշակի չափով տեղի ունեցավ:

Մի քանի տասնյակ տարիների ընթացքում իսլամի դրոշի տակ միավորվելով արաբական ցեղերը հաստատվեցին Հյուսիսային Աֆրիկայից մինչև Չինաստան և Հնդկաստանի կենտրոնական նահանգներից մինչև Կովկասյան լեռներ ընկած տարածքներում: Արդեն 711 թ. արաբները թափանցեցին նաև Իսպանիա:

Այդ արագ էքսպանսիան իր հետ բերեց մի քանի կարևոր փոփոխություն այն խնդիրների շարքում, որոնք պետք է լուծեին նոր պետության՝ խալիֆայության հիմնադիրները:

Նախ տեղի ունեցավ անցումը ումմայից[7] խալիֆայության, ինչը ենթադրում էր պետական վարչական համակարգի ձևավորում,

[6] Тойнби А., Постижение истории, с.126.

կառավարման և ենթակառուցվածքների գործունեության ապահովման համակարգում և խալիֆայության ներսում իմաստավորված և նպատակամղված հաղորդակցության ձևավորում:

Երկրորդ խնդիրը նույնպես կենսական նշանակություն ուներ. Արաբական թերակղզուց դուրս եկած և նվաճված տարածքներում բնակություն հաստատած արաբական ցեղերի մի քանի տասնյակ հազար[8] անդամների հնարավոր տարալուծումը կանխելը հրամայական էր:

Երրորդ խնդրը կապված էր իսլամ նոր ընդունող նվաճված ժողովուրդների ներկայացուցիչների հսկայական թվի հետ: Անհրաժեշտ էր հստակ ձևակերպել վերջիններիս կարգավիճակը, բացատրել նոր կրոնի հիմնական դրույթները և օրենքը, սովորեցնել նրանց արաբերեն, քանի որ Ղուրանը այդ լեզվով էր տրվել: Բացի այդ, անհրաժեշտ էր օգտագործել նրանց այն հարցերի լուծման համար, որոնց վերաբերյալ արաբական առաջնորդները կամ պատկերացում չունեին կամ էլ նրանց գիտելիքները չէին բավարարում առաջացող հարցերին պատասխաններ գտնելու համար:

Նոր մուսուլմանները, մեծամասամբ՝ ստրուկ դարձած ռազմագերիները, իսլամ էին ընդունում այն արաբական ցեղի միջոցով, որի անդամներից որևէ մեկի ստրուկն էին դարձել: Կրոնափոխությունից հետո նրանք ազատ էին արձակվում, սակայն մնում էին ցեղի անդամ մաուլաի (հոգնակին՝ մավալի) կարգավիճակով, ինչը նշանակում էր, որ նախկին ստրուկը ստանում էր անձնական ազատություն, մասնավոր սեփականություն

[7] Ումմա եզրույթը թարգմանվում է որպես կրոնական համայնք, սակայն Մուհամմադ մարգարեի ձևավորած ումման միաժամանակ և կրոնական համայնք էր, և պետություն, և հասարակություն:

[8] Համաձայն Օ. Բոլշակովի՝ մոտ 70 հազար:

ունենալու իրավունք, վճարում էր միայն զաքաթ, ինքն էր ընտրում իր գործունեության տեսակը, սակայն մյուս բոլոր հարցերում չեր կարող հավակնել հավասար իրավունքներ ունենալուն:

Նվաճողները ստիպված էին ադապտացվել իրենց համար բոլորովին նոր իրավիճակին: Սա էր այն մարտահրավերը, որին պետք է պատասխան տրվեր: Նվաճվածները նույնպես պետք է ադապտացվեին իրենց համար բոլորովին նոր իրավիճակին, ինչը նույնպես մարտահրավեր էր, որին պետք է պատասխան տրվեր: Երկրորդ դեպքում առաջին մեծ քայլը ակնհայտ էր՝ նվաճվածները նոր կրոնն ընդունեցին[9] և փորձեցին իրենց տեղը գտնել նոր պետության մեջ, սակայն անհավասարության պայմաններում:

Մավալիների շրջանակից առանձնացավ կրթված դասը, որը ծառայության անցավ ձևավորվող պետության վարչական օղակներում, ինչպես նաև արաբական ցեղերի սերուցքի պալատներում և կալվածքներում որպես կառավարիչներ (հաջիբ), քարտուղարներ (քաթիբ), հաշվապահներ, օգնականներ, դաստիարակներ և այլն: Մավալիներից շատերը, օգտվելով իրենց դիրքից, կարողացան մեծ ազդեցություն և հարստություն ձեռք բերել:

Այս դասին էին պատկանում նաև գրավոր մշակույթի հիմքերը ստեղծող գիտնականները և գրողները (ալ-Ջահիզի ձևակերպմամբ՝ «ուդաբա ալ-քութթաբ» դասը[10]), որոնց շնորհիվ արդեն 8-րդ. դարի

[9] Նվաճված ժողովուրդները կարելի է այս տեսանկյունից բաժանել երեք խմբի. ա) իսլամացած և արաբացած՝ Սիրիայի Եգիպտոսի և մի շարք այլ երկրների բնակչության մեծ մասը, բ) իսլամացած, բայց չարաբացած, օրինակ՝ կործանված Սասանյան կայսրության ժողովուրդների մեծ մասը, գ) չարաբացած և չիսլամացած, օրինակ՝ հայերը:

[10] «Ուդաբա ալ-քութթաբ» ձևակերպումը ունի հետևյալ իմաստը. քաթիբների (արաբ էմիրների և կառավարիչների քարտուղարներ, խորհրդականներ) շրջանակից դուրս եկած տաղանդավոր հեղինակներ, որոնք էլ հիմնականում ստեղծում էին իլմի (գիտություն) և ադաբի (գրավոր մշակույթին պատկանող բոլոր ստեղծագործությունները, որոնք դուրս էին իլմից, այսինքն՝

առաջին տասնամյակների ընթացքում սկսեցին ձևավորվել իսլամական, արաբական և հին (այդպես էին կոչվում այն գիտությունները, որոնք չէին պատկանում նախորդ երկուսի շարքին՝ հանրահաշիվը, երկրաչափությունը, բժշկությունը, աստղագիտությունը, բնագիտությունը և այլն) գիտությունները: Հիմնականում նաև նրանց շնորհիվ ստեղծվեց ադաբի գրականությունը:

Շատ ավելի բարդ էր արաբների պատասխանի որոնումների ճանապարհը, հատկապես այն պատճառով, որ Մուավիա իբն Աբու Սուֆյանի (մահ. 680 թ.) խալիֆ դառնալուց (660/61թթ) հետո կտրուկ փոխվեց պետության ձևավորման տրամաբանությունը:

Այս առումով հետաքրքիր է հետևել սկզբից ումմայի, ապա՝ պետության որպես ումմայի ղեկավարի տիտղոսի փոփոխություններին: Առաջին ղեկավարը մարգարեից հետո Աբու Բաքրն էր, որին անվանում էին «Խալիֆաթու Ռասուլ Ալլահ», այսինքն՝ Ալլահի մարգարեի փոխանորդ: Սակայն երկրորդ խալիֆ Օմարը արդեն անվանվում էր «Ամիր ալ-Մումինին», այսինքն՝ հավատացյալների էմիր (ամիր թարգմանաբար նշանակում է հրաման տվող[11]): Մյուս երկու խալիֆներին նույնպես այդպես էին անվանում: Սակայն Մուավիան փոխեց իր տիտղոսը: Նա կոչվեց «Խալիֆաթու-լ-Լահ», այսինքն՝ Ալլահի խալիֆ: Սա նշանակում էր, որ Օմայաններն իրենց իշխանությունը ոչ թե բռնազավթել են[12], այլ ստացել են անմիջապես Ալլահից: Այդ իմաստը իր կասիդաներում արտահայտում է նաև Օմայանների պալատական բանաստեղծ քրիստոնյա ալ-Ախտալը:

կրոնահիրավական գիտությունների ոլորտից: Ադաբի գրականությունը մշակում էր այն բոլոր գիտելիքների և հմտությունների շրջանակը, որոնք անհրաժեշտ էին կիրթ մարդ համարվելու համար):

[11] Կարելի է թարգմանել նաև որպես հրամանատար, սակայն հայերենում «հրամանատար» բառը հիմնականում ռազմական իմաստ է պարունակում, իսկ «ամիր»-ը հրամայում է հավատացյալներին բոլոր պարագաներում:

[12] Այս մեղադրանքները սկսեցին հնչել այն ժամանակ, երբ Մուավիան ստիպեց հավատարմության երդում տալ իր որդի Յազիդին:

Ալլահի խալիֆ լինելը թույլ տվեց Մուավիային ոչ միայն իր տերությունը ժառանգել իր որդուն՝ Յազիդին, այլ նաև դիտարկել այն որպես մուլք (ունեցվածք)[13], որը պատկանում է իրեն իրավունքի ուժով: Բալազուրինն իր «Անսաբ ալ-Աշրաֆ»-ում Մուավիայի հետևյալ արտահայտությունն է մեջբերում. «Հողը պատկանում է Ալլահին, իսկ ես Ալլահի խալիֆն եմ: Այն, ինչը ես վերցրել եմ ՝ իմն է, իսկ այն ինչը թողել եմ մարդկանց՝ իմ արժանիքն է»[14]: Այս մոտեցումը սկզբունքորեն տարբերվում է մինչ այդ ձևավորված և ձևակերպված դրվածքին. հողն Ալլահինն է, ումմայի ղեկավարը իր կարգադրության տակ Ալլահից տրված հողը և դրանից ստացված եկամուտը ծառայեցնում է ումմային՝ վերջինիս շահերից ելնելով՝ աստծո օրենքով: Նա չի կարող իր «արժանիքով», այսինքն՝ իր բարի կամքով բաշխել, տալ և վերցնել:

Բացի այդ, Մուավիայի խալիֆայությունը իր էությամբ նախ արաբական էր, ապա նոր մուսուլմանական: Նա և իր հիմնած Օմայանների հարստության բոլոր ներկայացուցիչները հպարտանում էին իրենց արաբ լինելով, իրենց ցեղերով, իրենց հերոսներով, բանաստեղծներով և բեդուինի առնական կերպարով, որն ամբողջականացվել էր դեռ նախաիսլամական շրջանում մուրուվա կոչվող հայեցակարգի մեջ[15]: Խալիֆայության վերնախավի գնահատականները և հայացքները պարտադրում էին որոշակի դիրք գրավելու ձգտում ունեցող մարդկանց, հատկապես՝ նոր մուսուլմանների թվից, ձգտել համապատասխանել այս

[13] Մուլք բառը ունի նաև «անսահման իշխանություն» իմաստը:

[14]Ահմադ իբն Յահյա ալ-Բալազուրի, Անսաբ ալ-Աշրաֆ, Ալ-ջուզ Աս-սանի, Դար ալ-Մաարիֆ, ալ-Կահիռա, 1959, էջ 1195:

[15] Այս մասին մանրամասն տես՝ Հովհաննիսյան Դ., «Իդեալական մարդու» փնտրտուքներում. մուրուվայի հայեցակարգի փոփոխությունները ջահիլիայից մինչև ադաբի գրականության ձևավորում, Արևելագիտության հարցեր, XI, Երևան, 2016, էջ 6-17:

գնահատականներին և մոտեցումներին, ինչը լրացուցիչ դրդապատճառ էր դառնում ադապտացման համար:

Արաբների խալիֆայության կառավարման համակարգում իրենց դիրքերի ամրապնդման և նվաճողական արշավանքների արդյունքում տեղի ունեցած հիմքային փոփոխությունները անշրջելի դարձնելու տեսակետից չափազանց կարևոր էին խալիֆ Աբդ ալ-Մալիքի (645/6-705) բարեփոխումները: Խալիֆ դառնալով 685 թ., նա կարողացավ վերականգնել խալիֆայության միասնականությունը, որից հետո անմիջապես ձեռնամուխ եղավ պետական համակարգի կայունացման համար մի քանի կարևոր նախաձեռնությունների իրականացմանը: Ներմուծելով նոր ֆինանսական և հարկային համակարգեր, Աբդ ալ-Մալիքը հրամայեց խալիֆայության դրամաշրջանառությունը կարգավորելու համար մետաղադրամ հատել, որը փոխարինեց նախկինում օգտագործվող բյուզանդական և սասանյան մետաղադրամներին: Բացի այդ, նա հրամայեց բոլոր պետական գրասենյակներում տեղական լեզուների փոխարեն (հունարեն, ասորերեն, ղպտիերեն, պարսկերեն և այլն) որպես պետական գրագրության լեզու մտցնել արաբերենը[16]:

[16] Բալազուրին իր «Ֆութուհ ալ-Բուլդան» աշխատության մեջ այսպես է պատմում. «Ասորիքի պետական գրասենյակներում լեզուն մնացել էր հունարենը մինչև Աբդ ալ-Մալիք իբն Մրվանի իշխանության գլուխ անցնելը, որը 700 թ. հրամայեց այն փոխարինել արաբերենով: Բանն այն է, որ մի հոռոմ քարտուղար, կամենալով ինչ որ բան գրել և ջուր չգտնելով, միզել էր թանաքամանի մեջ: Այդ մասին լսելով, Աբդ ալ-Մալիքը պատժել էր նրան և հրամայել Սուլայման իբն Սաադին պետական գրասենյակների (դիվան) լեզուն փոխել...Տարին դեռ չէր լրացել, երբ լեզվի փոփոխությունը կատարվել էր, և նա բերեց Աբդ ալ-Մալիքին մատյանները: Նա իր մոտ կանչեց իր քարտուղար Սարջունին (Սերգիոս) և ցույց տվեց նրան, իսկ նա տխրեց և մռայլ դուրս եկավ: Հանդիպելով մի խումբ հոռոմ քարտուղարների (գրագիր) ասաց նրանց. «Այլ արհեստ փնտրեք ապրուստի համար, քանզի Ալլահն այս արհեստը ձեզանից վերցրել է»»: Մեջբերված հատվածը իմ ուսուցիչ Արամ Տեր-Ղևոնդյանի թարգմանությամբ՝ Արաբ մատենագիրներ: Թ-Ժ դարեր:

Այս վերջինը խալիֆայության միասնականության համար սկզբունքային նշանակություն ուներ, քանի որ արաբերենի կիրառման ոլորտները ընդլայնում էր՝ դարձնելով այն ոչ միայն կրոնական և ծիսական, այլ նաև պետական և հասարակական կոմունիկացիայի միջոց: Հասկանալի է, որ այս ռեֆորմը սկզբունքային նշանակություն ունեցավ փոխադարձ ադապտացման գործընթացների խթանման համար, որի արդյունքում քայլ առ քայլ ձևավորվեց նոր արաբամուսուլմանական մշակույթի ամբողջ համալիրը[17]:

Իսլամի վաղ շրջանի գրավոր աղբյուրները հարուստ նյութ են տրամադրում վերը նշված խնդրի հետազոտողների համար:

Քննարկվող հարցերի տեսանկյունից, 8-րդ դարի առաջին կեսը չափազանց հետաքրքիր է այն հանգամանքի շնորհիվ, որ այդ ժամանակաշրջանում են ստեղծվում առաջին գրավոր աղբյուրները, ինչն արդեն ադապտացիոն հզորագույն գործիքի

Ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդանի: Երևան, 2005, է. 262:

[17] Միջմշակութային հաղորդակցության շրջանակներում անցյալ դարի 60-ական թվականներին մշակվել է ակուլտուրացիայի տեսությունը, որը հիմնականում չորս ռազմավարություն է առանձնացնում տվյալ հասարակության ստորադաս խմբերի համար (մանրամասն տես՝ Dohrenwend B., Smith R. Toward a theory of acculturation // Southwestern Journal of Anthropology. 1962. Vol. 18, № 1. P. 30–39.): 8 –րդ. դարի առաջին կեսի խալիֆայությունում առակա էին բոլոր չորս ռազմավարությունները, սակայն դրանցից երեքը այդ ժամանակաշրջանում աննշան դեր էին խաղում: Հիմնականը, իմ տեսակետից, չորրորդ ռազմավարությունն էր, որը տեսության հեղինակները անվանել էին reconstitution՝ վերաստեղծում: Վերաստեղծումը, Բ.Դոհրենվենդի և Ռ.Սմիթի տեսակետից, նշանակում է նոր իդեալների ձեռք բերում և նոր, մինչ այդ գոյություն չունեցած մշակույթի ստեղծում: Իմ տեսակետից, այդ ռազմավարությունը չէր կարող միայն մեկ խմբի ռազմավարություն լինել, քանի որ վերջինիս ջանքերը արդյունք կարող էին ունենալ միայն վերադաս կամ գերիշխող խմբի կողմից նպաստավոր պայմանների ձևավորման դեպքում, ինչ արդեն նշանակում է ոչ թե ակուլտուրացիա, այլ փոխադարձ ադապտացում:

ստեղծման գործընթաց է: Այդ շրջանի աղբյուրները ներկայացնում են մշակույթի համար կարևորագույն նշանակություն ունեցող բանավոր տեքստերի՝ գրեթե առանց մշակման գրավոր տեքստերի վերածման օրինակներ: Բանահավաքության շնորհիվ հավաքվում և գրի է առնվում նախաիսլամական և վաղիսլամական շրջանի արձակ բանաստեղծական տեքստերի մեծածավալ նյութ, որը հիմք է դառնում կրոնական և արաբական գիտությունների զարգացման համար: Հավաքված նյութի վերլուծությունը և դասակարգումը մի շարք նոր գիտությունների ստեղծման պատճառ դարձավ: Այդ հսկայական նյութից նոր արաբամուսուլմանական մշակույթի հիմնական սուբյեկտի համար անհրաժեշտ գիտելիքների շրջանակը գծելու և այդ գիտելիքը հաստատող տեքստերն առանձնացնելու համար ձևավորվեց ադաբի գրականությունը:

Ադաբի առաջին հեղինակները ծագումով հիմնականում պարսիկներ էին: Նրանցից առանձնանում է Աբդալլահ իբն ալ-Մուկաֆան (մահ. 760 թ.), բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ և թարգմանիչ (փահլավերենից), որի երկու ստեղծագործությունները՝ «Մեծ ադաբի գիրք» և «Փոքր ադաբի գիրք»՝ ոչ միայն դիդակտիկ բարոյաէթիկական բնույթ ունեն, այլ նաև հավակնում են արաբական կարևորագույն հասկացություններից մեկը՝ մուրուվան՝ վերաիմաստավորել և դարձնել արդեն ոչ թե քոչվորական հասարակության արժեքային հիմնավորում, այլ ստադիալ առումով ավելի բարձր մակարդակի վրա գտնվող խալիֆայության քաղաքակրթական նորմ: Նա սովորեցնում է, թե ինչպես պետք է իշանության տերն իրականացնի իր իրավունքը, ինչպես ընտրի իր խորհրդականներին, ինչ հատկություններ և որակներ գնահատի նրանց մեջ: Իբն ալ-Մուկաֆան խոսում է կիրթ վարվելակերպի մասին, պատմում է տարբեր օրինակներ հին պետությունների տիրակալների գործելակերպի մասին, հիմնականում՝ սասանյան

կայսրության պատմությունից: Հայտնի են պատմություններ այն մասին, թե ինչպես էր նա սովորեցում արաբ էմիրներին ուտելուց հետո ձեռքերը լվանալ, օծանելիք օգտագործել և այլն:

Աբդալլահ իբն ալ-Մուկաֆան «ահլ աս-սուննա», այսինքն՝ սուննայով ուղորդվող համայնք (կամ՝ մարդիկ) ձևակերպմանը ավելացնում է ֆադլ (արժանապատվություն, առաքինություն) և մուրուվա եզրերը: «Ահլ աս-սուննա ուա-լ-ֆադլ ուա-լ-մուրուվա»՝ սուննայով ուղորդվող համայնքը առաքինի է և առաջնորդվում է մուրուվայից բխող իդեալական անձի կերպարին համապատասխանելու գաղափարով: Սակայն Իբն ալ-Մուկաֆֆայի ընկալմամբ, մուրուվվային համապատասխանում է արդեն ոչ թե սանձարձակ և հանդուգն, անսահման հյուրասեր և անչափ խիզախ բեդուինը, այլ արժանապատիվ, խելամիտ, աստվածավախ և կիրթ անձնավորությունը, ընդ որում «կիրթ»-ն, իր ընկալմամբ, համարվում է իրանական պալատական վարքուբարքին համապատասխանելը:

Ի պատասխան «օտարների» (աջամ) ձևավորվող ադաբի իմաստային բովանդակության, մուսուլման գիտնականները (ալիմ) ստեղծում են Ղուրանից և սուննայից բխող ադաբի իրենց տարբերակը: Ալիմներից առաջինը, որի հադիսներին նվիրված «Մուսաննաֆ» աշխատությունում հատուկ մաս է հատկացվում ադաբին (Քիթաբ ալ-Ադաբ), Աբու Բաքր իբն Աբու Շայբան էր (775-849): Նրա տեսակետից լավ հավատացյալ և կիրթ մարդ լինելու միակ ճանապարհը Ալլահի մարգարեին հետևելն է: Անել այն և այնպես, ինչպես արել է Մուհամմադ մարգարեն, որովետև դա «մարուֆ» է՝ ճանաչված, գնահատելի: Մերժել այն ամենը, ինչ մերժել է մարգարեն, որովհետև դա «մունքար» է՝ պախարակելի, ժխտելի է:

Արդեն այն, թե ինչպիսի մանրակրկիտ ձևով է Իբն Աբու Շայբան վերակառուցում մարգարեի՝ որպես իդեալական կերպարի դիմագիծը, ցույց է տալիս Աբդալլահ իբն ալ-Մուկաֆայի հսկայական

ազդեցությունը իր ժամանակակիցների և հաջորդ սերունդների վրա, որն, ավանդապահների տեսակետից, պետք է կանխվեր և սահմանափակվեր: Պետք է ձգտել նմանվել իդեալական կերպարին ամեն ինչի մեջ՝ ոտնամանի ընտրությունից մինչև աստվածավախության ներքին խորը զգացում ունենալը, պետք է խրախուսել ողջունելին և մերժել պախարակելին այնպես, ինչպես դա անում էր Ալլահի մարգարեն: Սա է ավանդապահների պատասխանը նոր մուսուլմանների ազդեցությամբ ձևավորվող նոր բարքերին, բարոյագիտությանը և վարքի կաղապարներին:

Երկու ճանապարհ կար նոր իրողություններին համակերպվելու համար, որոնք թեև հակադիր չեն, սակայն շատ հարցերում իրար հակասում են: Այսպիսով հիմք է դրվում այն վեճերին և հասարակական ու գաղափարական բախումներին արժեքային և մշակութային համակարգերի բոլորովին նոր քաղաքակրթական նորմերին և ինստիտուտներին համապատասխանեցնելու վերաբերյալ, որոնք դրսևորվեցին ապստամբությունների, շարժումների, ինչպես նաև թեժ ինտելեկտուալ բանավեճերի միջոցով նաև 9-10-րդ դարերում:

Այս գործընթացների արդյունքում հատկապես 9-րդ դարի երկրորդ կեսից սկսած ձևավորվում է ադաբի խնդիրներին նվիրված բազմազան և բազմաժանր գրականություն, որը պատասխանների մի քանի տարբերակ է առաջարկում այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի կիրթ մարդը քաղաքակիրթ հասարակությունում: Լայն և բարդ ընթացք ունեցող քննարկում է ծավալվում «գիտելիք» (իլմ) հասկացության էության, բովանդակության, ինչպես նաև գիտելիքի այն համալիրի վերաբերյալ, որին պետք է տիրապետի պաշտոն ստանձնելուն հավակնող անձնավորությունը:

ARAB WORKS OF THE 8-9TH CENTURIES AS A SOURCE FOR THE STUDY OF ADAPTATION PROCESSES

Davit Hovhnannisyan

(Summary)

The examination of the adaptation processes of cultures to the civilizational systems is of utmost importance. Early Islamic written sources provide rich material for research on that issue. The article presents the Arabic manuscripts of the 8-9th centuries as an important source of research on the adaptation processes.

During the first decades of the 8th century the first written sources were created, as well as the process of legal-regulated writing of hadiths began along with the creation of the first works on Adab. This process was considered to be one of the important tools of adaptation. In the response of foreign/ajam (mainly Iranian) authors, Muslim Scholars (Alims) developed their own version of Adab based on Quran and Sunna.

During the 9th century, as a result of the above-mentioned processes, a diverse and multi-genre literature on the problems of Adab was formed, which offers several options for answering the question of what an educated person should be like in a civilized society. The development of adaptation processes mainly predetermines the further historical path of the arab-muslim society.

АРАБСКИЕ РАБОТЫ 8-9 ВВ КАК ИСТОЧНИК ИЗУЧЕНИЯ АДАПТАЦИОНЫХ ПРОЦЕССОВ

Давид Ованнисян

(Резюме)

Исследование процессов адаптации культур к цивилизационным системам является важной и актуальной задачей. Подходящим ресурсом для решения этой исследовательской задачи являются письменные источники периода раннего ислама.

Труды арабских ученых VIII-IX вв. в данной статье представляются в качестве источников для изучения адаптационных процессов. Первая половина VIII века крайне интересна по той причине, что именно в тот период создавались первые письменные источники, что само по себе являлось процессом создания эффективного адаптационного инструмента. Источники этого периода представляют собой важные для

культуры устные тексты, которые впоследствии практически в неизмененном виде превратились в письменные.

В течение первых десятилетий того же века начался упорядоченный процесс написания хадисов и появились первые труды об адабе. Мусульманские ученые в ответ на труды иностранных коллег (по большей части иранских) стали создавать свои адабы, вытекающие из Корана и Сунны.

В результате вышеупомянутых процессов в течение IX века были созданы многочисленные труды, которые дают ответы на ряд вопросов об адабе, среди которых и различные вариации ответа на вопрос о том, каким должен быть образованный человек в цивилизованном обществе. Развитие адаптационных процессов во многом предопределило дальнейший исторический путь арабо-мусульманского общества.